

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՎԱՅՐ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏՐՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, ՉԱՓԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ**

ԿԱՐԳ

1. Սույն կարգով (այսուհետև՝ Կարգ) սահմանվում են ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողներին (բացառությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի) ծառայության նոր վայր տեղափոխվելու դեպքում տրվող դրամական օգնության պայմանները, չափերը և վճարման կարգը:

2. Ծառայության նոր վայր տեղափոխվելու դեպքում զինծառայողին տրվող դրամական օգնությունը հաշվարկվում ու վճարվում է ծառայության նոր վայրում՝ զինծառայողի ու նրա հետ տեղափոխված ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար՝ հիմք ընդունելով նախկին և նոր ծառայության վայրերի միջև հեռավորությունը և սույն Կարգով հաստատված չափերը:

3. Սույն Կարգի համաձայն ծառայության նոր վայր տեղափոխված զինծառայողի դրամական օգնությունը հաշվարկվում է օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ՝ անկախ տվյալ օրացուցային տարվա ընթացքում զինծառայողին մեկից ավելի անգամներ ծառայության նոր վայր տեղափոխելու հանգամանքից:

4. Կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնված զինծառայողին պաշտոնի նշանակելու դեպքում դրամական օգնությունը հաշվարկվում ու վճարվում է սույն Կարգի 2-րդ կետի համաձայն՝ հիմք ընդունելով մինչև կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնվելը ծառայության վայրի և նոր ծառայության վայրի միջև հեռավորությունը:

5. Ծառայության նոր վայր տեղափոխվելու դեպքում զինծառայողին տրվող դրամական օգնության հաշվարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերն են.

1) զինծառայողի զեկուցագիրը՝ իր հետ նոր ծառայության վայր տեղափոխված ընտանիքի կազմի վերաբերյալ (նշելով ազգակցական կապը),

2) նշանակման (տեղափոխման) վերաբերյալ հրամանի պատճենը,

3) ծառայության նոր վայրի ֆինանսական ծառայությունում նախապատրաստված ծառայության վայրերի միջև հեռավորության հաշվարկի (ձև 1) և նախկին ծառայության վայրի կադրային մարմնի կողմից տրամադրված իր հետ նոր ծառայության վայր տեղափոխվող ընտանիքի կազմի վերաբերյալ (ազգակցական կապը հաստատող) տեղեկանքը (ձև 2): Ընդ որում, կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողին համապատասխան պաշտոնի նշանակելիս նշված տեղեկանքը տրամադրում է վերջին զբաղեցրած պաշտոնից ազատող պաշտոնատար անձի ենթակա կադրային ստորաբաժանումը, իսկ հաշվարկը կազմվում է ծառայության նոր վայրի ֆինանսական ծառայությունում,

4) նախկին զորամասում (բնակավայրում) զինծառայողի զեկուցագրում նշված ընտանիքի անդամների հետ բնակվելու մասին տեղեկանք՝ ըստ անհրաժեշտության:

6. Ռ-ազմատուսումնական հաստատությունն ավարտելուց հետո ծառայության նշանակված զինծառայողին և նրա ընտանիքի անդամներին տրվող դրամական օգնությունը հաշվարկելիս և վճարելիս հիմք է ընդունվում նրա մշտական բնակության և ծառայության վայրերի միջև եղած հեռավորությունը:

7. ՀՀ պաշտպանության նախարարության ռազմատուսումնական հաստատությունների շրջանավարտներին իրենց մշտական բնակության ու ծառայության վայրերի միջև եղած հեռավորության հաշվարկը (հաշվարկը պատրաստվում է ծառայության նոր վայրի ֆինանսական ծառայությունում) և իրենց հետ նոր ծառայության վայր տեղափոխվող ընտանիքների կազմի վերաբերյալ (ազգակցական կապը հաստատող) տեղեկանքը տրամադրում է տվյալ Ռ-ՌԻՀ-ի կադրային մարմինը:

8. Օտարերկրյա ռազմատուսումնական հաստատությունների շրջանավարտներին մշտական բնակության ու ծառայության վայրերի միջև եղած հեռավորության հաշվարկը (հաշվարկը նախապատրաստվում է ծառայության նոր վայրի ֆինանսական ծառայությունում) և իրենց հետ նոր ծառայության վայր տեղափոխվող ընտանիքների կազմի վերաբերյալ (ազգակցական կապը հաստատող) տեղեկանքը տրամադրում է ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչությունը:

9. Ծառայության նոր վայր տեղափոխվելու դեպքում հաշվարկվող դրամական օգնության չափերն են.

1) զինծառայողի համար՝

ա. նախկին և նոր ծառայության վայրերի միջև 30 կիլոմետրից մինչև 100 կիլոմետր հեռավորության դեպքում՝ 25.000 դրամ,

բ. նախկին և նոր ծառայության վայրերի միջև 100 և ավելի կիլոմետր հեռավորության դեպքում՝ 50.000 դրամ,

2) զինծառայողի հետ տեղափոխվող ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար՝ 12.000 դրամ:

10. Ծառայության նոր վայր տեղափոխվելու դեպքում սույն կարգում նշված համապատասխան չափով փոխհատուցման համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հրապարակված՝ Հայաստանի Հանրապետության վարչական տարածքների միջև հեռավորությունները:

11. Սույն Կարգի իմաստով զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում ամուսինը, զավակները և ծնողները:

Հ Ա Շ Վ Ա Ր Կ

Ծառայության նոր վայր տեղափոխվելու (նշանակվելու) դեպքում վճարվող դրամական օգնության

Մինչև 100 կմ _____ 100 կմ-ից ավելի _____

Ազգանունը _____ անունը _____ հայրանունը _____

Պաշտոնը _____

Հասանելիք նպաստի չափը _____ դրամ, ընտանիքի _____ անդամներին
(անդամների թիվը)

Ընդամենը՝ _____ դրամ

Վճարման ենթակա գումարը՝ _____ դրամ

Զորամասի ֆինանսական ծառայության պետ՝ _____

Հաշվարկող՝ _____

(ա.,ա.,հ., ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Ազգանունը _____ անունը _____

Հայրանունը _____ զինկոչումը _____

Համաձայն _____ « ____ » _____ 202 թ. _____ հրամանի
(հրամանն արձակողը)

Ծառայության մեկ տարում առաջին անգամ հրամանով _____
(որտեղից)

_____ տեղափոխվել է _____
(ուր)

Համաձայն ներկայացված վկայականների _____
(ա.,ա.,հ.)

Հ/հ	Ընտանիքի անդամները	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան թիվը	Ծննդյան և ամուսնության վկայականների համարները
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				

« ____ » _____ 202 թ.

Ջորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատար (պետ)՝

Կ.տ.

Կատարեց՝